

ԱՆԼՍԵԼԻ ԽՈՐՈՒՆԿ ՄՐՏԻՍ ՄԷՋ

ՏԱԼՁՈՒՈՂ ՍԱՓՈՐ

Անլսելի խորունկ սրտիս մէջ կան ինչպէս
Բարախուժներ՝ ծառերը մուժ վերջալոյսին.
Անոնց լըտին և հոգեզմայլ կ'ունենդդեմ ես,
Չերդ աղբիւրի մը վայրահակ տրտում լուսին,

Որ կը տեսնէ դէմքն իր անշարժ ու կը դառնայ
Խօ՛լ թիթեռնիկ էութեան շուրջն իր պրիսմակին
Կապոյտ հրմայք որ կը վառէ շուրին վըրայ
Վըտակներու պարտէզին մէջ անոր ոսկին:

Եւ ըսպատել գուցէ որ սիրտը զաղտնօրէն
Ողջակիզուի խորհուրդներու կարմիր հուրէն
Այս տաճարին մէջ ուր կեանքին մեռաւ աստուած

Իր յարութեան ժըպիտը լուռ շրթներուն վրայ.
Ցայգը խորունկ իր բիւրեղին մէջ բանտըւած
Լուսիկ կաթիլ մ'է արցունքի որ կը դողայ...

Գուցէ ծարաւ է ծաղիկի մը բոյրին
Թուրծ հողէ բոբբ սափորին սիրտը թափուր
Անեակին մէջ ա՛յնքան խորունկ, ա՛յնքան լուռ
Ուր տարօրէն կ'առնէ տենչանքը մարմին.

Ու տանջըւող է աւելի քան տըխուր
Սիրտը՝ որուն բարախուժները կ'այրին
Աւելի վառ կարօտ վարդի մը բոյրին
Թուրծ հողէ բոբբ սափորին ծոցը թափուր.

Չայնին որ կանչն էր յոյսերուն կը յիշէ
Մեղեգին ս՛րբ իր կշռոյթին անսահման
Լըռութիւնն այս որ երգին լոյսն է գուցէ

Ա՛յնքան թրթռուն որ կը ծաղկին երազներ,
Ա՛յնքան վըճիտ որ շուրջն ահա կը դողան
Սափորին բոյրն և անցեալին իր ըստուեր...

ԱՐՄԵՆ-ԵՐԿՈՑ

Հ. ԱԼԻՇԱՆ ՏԻՐՈՒՆԻՒՆ ՄԷՋ

ՏՈՂ մը միայն միտքս մնացեր է Լէօի
մէկ յօդուածէն գրուած տարիներ ատաջ՝
Մշակի մէջ, Հ. Ալիշանի բանաստեղծու-
թեան մասին. « Իբրև երգիչ Հ. Ալիշան
սիրում է մեկամաղձիկ տխուր արամա-
ղրութիւն արտայայտող տողեր »: Այս ա-
սացուածքը մտքիս մէջ կը նորոգուի երբ
ուսումնասիրել կը սկսիմ Տիրունին: Լէօ
Բ՛նչ ազդեցութեան տակ այս գաղափարը
կազմեր է. կարդացէր է արդեօք Տիրու-
նիի գրաբար քերթուածները. կամ մտա-
ծե՛ր է, այդ տողը գրած ասան, մէկու մը
վրայ, օր. Աստիֆին կամ Ռընէին...
Լէօ աւելի մտածած ըլլալու է « վէրք
Հայաստանի »-ին վրայ. վէրքն արդէն իր
հետ կը բերէ մարդուս մէջ բնութեան ու-
ժերու խաթարում և հետևաբար տխրու-
թիւն. Հայաստանի վէրքը մանաւանդ,
դարաւոր վէրք մը և դարաւոր ալ տխրու-
թիւն. ու Լէօ կարդալով Հայրունիի ոտաւ

նաւորները, իսկոյն յօրինե՛ր է իր դրու-
թիւնը Ալիշանի բանաստեղծութեան վրայ.
Եթէ Հայրունիին հետ կարդար նաև Տիրու-
նին, Բ՛նչ պիտի ըսէր Լէօ...:

Բանաստեղծ Ալիշանի նկարագիրը տո-
ղով մը պատկերացնել դժուարին է. ամ-
բողջ կեանք մը կայ մէջը որ իր ամէնօր-
եայ բազմամասնութիւններով կը խուսա-
փէ կեդրոնանալէ և կորիզի մը շուրջ խըմ-
բուելէ. իր մէջ շատ զօրութիւններ կան որ
ատանձին կ'ուզեն ապրիլ և յաղթանակել,
որով ամբողջին ուժգնութեան ալ տուժել
կու տան, իր մէջ բանաստեղծ ըլլալու գի-
տակցութիւնն աւելի կարծես քնազըր կայ.
քնազըն ալ ամէն վայրկեան ու ամէն պա-
րագային նոյն ոճով չի յայտնուիր մարդուս
մէջ. ասկից արտայայտուելու զանազան
կերպեր կը ծնանին ու կ'անհետանան: Սա-
կայն այս բոլոր տարուբերող զօրութիւն-
ներուն մէջ ալ կայ հիմ մը և գոյն մը՝

Հ. Ալիշանի բով, որ անփոփոխ կը շարունակէ գոյութիւնը իր տեսակին մէջ և է տիրութեան հակամիտութիւնը, ինչ որ նշմարեւ է նաև 1էօ,

Այդ տիրութիւնը սակայն՝ որ համակեր է Հ. Ալիշան, ինչ բանի արդիւնը կրնայ եղած ըլլալ: — Ատիկա չէր կարող առաջ գալ իր կրօնա-խորհրդական տրամադրութենէն, որ մարդկային ոչնչութեան և իրերու ունայնութեան զաղափարին վրայ կը հիմնէ խորհրդածող տիրութիւն մը. ընդհակառակն այդ տրամադրութիւնը միթարութեան աղբիւր եղած է իր հոգիին՝ ու անոր կ'ապաստանի ամէն յուզումէ վերջ: Ապահով ինք ունեցած է խառնուածքի հակում մը ղէպ ի տիրութիւն, բայց ասիկա ալ խնդիր ամբողջապէս չի պարզեր Ալիշանի մէջ՝ որ հակազդեցութիւններու մարդն է ու կրնար այդ միտումը բարեփոխել, կամ անհետացնել ալ: Մինչդեռ այդ խառնուածքի հակումն և այդ բնածին զգացումը ծաւալած ու սաստկացած են տարիներու ընթացքին, ինչպէս կը նշմարուի իր բանաստեղծութեան մէջ, և ահա թէ ինչ երանգներով:

Մարդ մը ապրած հեռու կեանքէ և ընդարձակ ընկերութենէ, անած այն զգացմաներով՝ որով անթըշտամ ծաղկակամեանք մը զտնեռ ու կը զգայ թէ լոյսն ալ, գեղն ալ կը մարին ու կ'ոչնչանան ինչպէս և սիրուն սիրտը՝ առանց վայելած ըլլալու. մարդ մը որ իր շուրջը կը տեսնէ լուկ անհուն մեռելութիւն մը՝ որուն ահարկութիւնը կը կտորեն միայն հեռուէն եկող կոհակներու մոնչիւնները՝ նման սրտի մը քստմնասարսուռ հծծումներուն. մարդ մը որ իր խղիղի միայնութեան մէջ կարծես ամբողջ մարդկութեան ցար կը զգայ հոգիին խորը, առանց մտերիմ մ'ունենալու որ հասու ըլլայ իր տառապանքներուն. իր ականջները մահուան դաշնակութիւնը միայն կը ճանչնան, իր բերեւը միշտ հողին են, կարծես գերեզմանի հետքեր խուզարկելու համար. ահա պատկերներ՝ որոնցմով թէև տարտամ ու հաբևանցի, բայց դրապէս կը յայտնուի այդ

տիրութիւնը, մանաւանդ Տիրունիի քերթուածներուն մէջ՝, Այս բոլորը հոգեկան վիճակ մը չ'ոճեր մատնանշել կամ ներքին տրամի մը գոյութիւնը, որ ծայր տուած ըլլայ նոյն իսկ իր քերթողի կեանքի սկզբնաւորութեան, երկու ընդդիմադիր ուժերու պայքարումով և խորտակումով: — Այդ ոտանաւորներուն մէջ որոշ կը տեսնուի որ Ալիշանի բնական զօրութիւններն ու կիրքերը ուժգին եղած են, կենդանի և բարոտ, որոնք սակայն հարկադրուել են զործել իրենք իրենց մէջ առանց արտագեղեցու, առանց առարկայի, անտես փոթորկումներով. ունեցել է յոյզեր և փափուկ գորով, որոնք սակայն խանդակաթ զեղումներու փոխաբէն քերթողին սրտին մէջ միայնացել են բուերու պէս. ունեցած է երևակայութիւն կ'ը ճոխ և տարածուն, բայց արտաքին կեանքը աղքատ եղած է ազատուն և պարփակուած. ո՛րքան սիրտը յորդ եղած է և բորբորուն, այնքան շուրջի աշխարհը ունայն և նուազած: Այս հակասութիւնէն է ահա որ ծնած են իր հոգւոյն մէջ ահաւոր դառնութիւն և վիշտ մը շատ թաքուն և խորաթափանց որ սրտի միայնութենէն ծագած միայնութեան մէջ ալ անհետացած են ու եղած ամենէն պատուհասակոծ տառապանքը իր անծին համար: Այս յոյզերով, հակասուած գորովով ու ցաւով տոչորուած էին վիպական դպրոցի պետերն ալ. և Ալիշան Շաքոպրիանի ուղղած քերթուածին մէջ ինքզինք ալ զպէս կը նկարագրէ, կը յայտարարէ հետևող եղած ըլլալ անոր զգալակերպին և երևակայեցողի: Դժբախտարար հոգեբանական այս վիճակը Ալիշանի մէջ ունեցած է աւելի ներքին գոյութիւն մը. իր « երազայայտ նագիլի քերթուածներն », իր « ցնորքն և աշխարհը » ըրդիւնք խանդոտ զգացումներու և անսանձ երևակայութեան, մարեր ու չքացել են հոգւոյն խորը՝ ճնշուած հոգեկան զօրութիւններէ: Հոգեկան այս զօրութիւնները

1. Տիրունի, տ. 1886. էջեր 13, 14, 19, 88, 166, 191, 195, 204, 217, 222, 226 ևն.

այնքան բուռն չէին զգացուած, բայց մտածուած էին, ուզուած էին և այդ պայքարէն յաղթական ելան: Սակայն նոյն իսկ այդ զսպուած լուծենէն ինչպիսի բացատրութիւններ և բառեր խուսափած են, որոնք նշան են զգայականութեան թափին՝ որ կ'ուզէր միշտ զեզանիլ, ամենէն անտարբեր քերթուածներուն մէջ ալ. մինչև որ Հ. Ալիշան աւիւնի ամենէն բոբր ժամանակին, այսինքն 1852ին, ազատելու համար զինքը սպառող խոռվըն կը հրաժարի բանաստեղծի կեանքէն՝ այնքան յուզումով սկսած ու այնքան յուզումով ալ թերատած. այնուհետև միայն պարագայական քերթուածներ պիտի շարադրէ: Ահա ուրեմն այդ տխուր տրամադրութիւնը, արդիւնք՝ հոգեկան վիճակի մը, բորբոքած՝ ներքին ոգորումներէ. հիմայ դիւրին է ըմբռնել ատոր տարածականութիւնն ու անտարբեր քերթուածներուն մէջ ալ սպրդած ըլլալը:

Այս տիրութիւնը չունի բնաւ ընդթը այն տոնյն, անդորր ու եթերային մեղամաղձութեան որ օծած է օր. Լամբարդիի քնարերգութիւնը. Ալիշանի քով ցար զօրեղապէս զգացուած է, ապրուած ցաւ մըն է և, ըսենք, արտայայտուած ալ, բայց ոչ թէ լիահոս յորդումով այլ անջատ անջատ ժայթքումներով: Յաւի զգացման այդ ժայթքումները աւելի կը շեշտուին 1844ին ու մանաւանդ անկից վերջ: Ի հարկէ ցար անկատարութեան, տկարութեան և կեանքի անկածութեան գիտակցութիւնը կատարեալ ըլլայ, այնքան ցաւին արտայայտութիւնը կը զօրանայ ու կը բացորոշի. իսկ գիտակցութիւն մը կատարեալ ընելու համար մեզի հարկաւոր է քանի մը տարիներու գործունէութիւնը. անա պատճառը՝ որ ուշ յայտնուի այդ ցար իր որոշականութեամբ և սաստկութեամբ: Ըսուեցաւ թէ Ալիշանի քով ամենէն աւելի Տիրունին, մանաւանդ անոր վերջին քերթուածները՝ որ այդ զգացման նուիրուած են, կը պայծառացնեն այդ ցարը, այնու հանդերձ այդ կտորներուն մէջ ալ

ցար ներկայացուած է նորէն իբր վերլիշում կամ վերակենդանացում նախկին յուզումներու՝ երևակայութեան մէջ, քան իբր ուղղակի առարկայացում զգացումին. վերլիշումներ սակայն որ շատ բորբոքուն են, կիզելու աստիճան: Լաւ է տեսնել թէ այդ քերթուածները ինչ ոճով կը պարուանակեն այդ զգացումը:

Տիրունիի այդ վերջին կտորները ծառայութեան արդէն «բանք պանդխտի» վերադարձի տակ և տասնևութ քերթուածներ են, գրուած պանդխտութեան միջոց 1852ին. իրենց նիւթ ունին պանդխտութեան զաղափարը՝ արտադրող մեղամաղձ զգացումներու և հասարակաց տեղիք մը ընդհանուր գրականութեան մէջ: Այս կտորներուն մէջ Ալիշանի ներմուծած նորութիւններն են, ընդվզող հոգիի մը խոռվըր և տանջող տրտունջները, ինչպէս երբեմն անակնկալ ու գողտր պատկերներու ստեղծումը՝ փափուկ զգացումներու նրբերանգով, որ քերթուածներէն ոմանց մէջ ինչպէս ի Հովն Հովսիս Հ., ի Սիսիւ Սրեկիս, Աս Նիժնաե շատ գողտր և սիրուն հիւսուածներ կ'առնեն ու կը խառնուին բնութեան զեղին և զգացման հետ: Բայց եթէ դիտենք լրջօրէն պանդխտութեան զաղափարը միայն ինչպէս որ ներկայացուած է այդ կտորներուն մէջ, կը տեսնենք որ շատ ամփոփ և անձուկ է իր շրջածիրով ու իմաստով, երբեմն նոյն իսկ չափազանց միամիտ կերպով յայտնուած, անյարմար գույն տեսլական մ'ունեցողի. այնու հանդերձ այդ զաղափարը և զգացումը անկեղծութեամբ արտայայտուած են որով կարելի չէ կասկածիլ անոնց զգացուած ըլլալուն վրայ:

Այս պատճառաւ մարդ կը հարկադրուի մտածել թէ այդ կտորներուն մէջ Հ. Ալիշան պանդխտութիւնն ընտրել է սոսկ առիթ՝ անդրադառնալու իր ներքին յուզումներուն վրայ, իր զգայական պայքարներուն, «կիրքերու հողմունքին» որ դէզադէզ հնչեն ունայն արտին մէջ» (էջ 166) այնքան տարիներէ ի վեր, և հիմայ այդ կիրքերու պայքարը, այդ սրտի միայնութիւնը օտար երկրի միայնութեան մէջ

աւելի զգացուած ու աւելի ալ հրդեհուած
 ալ չի ճնշուիր ու կը պոռթկայ ուրիշ
 ձևի մը ներքև. « Բաւաք պանդխտի » ի
 առջին քերթուածին ընթերցումն արդէն այս
 տպագրութիւնը կը ձգէ լիթէ այսպէս նկա-
 տենց այդ քերթուածները, անոնց հիմնական
 վարկը աւելի կը բարձրանայ, պանդխտու-
 թեան վիճակը հոգեբանական աւելի բարդ
 կացութեան մը կը փոխուի, բացատրու-
 թիւններէն շատեր իմաստ մը կը ստանան
 ու կարելի կ'ըլլայ այդ ցաւազին քնարեր-
 զութեան շունչն իրապէս զգալ ու ճաշա-
 կել, հողային պանդխտութիւնը լոկ զբփռ
 մըն է. անոնց ծնունդ տուող էսպէս
 կ'ըլլայ, ըսենց զգայական պանդխտու-
 թիւն մը, որ երկար ժամանակ իր սրտին
 մէջ կրած է ❶

Տասներկու տարիներ անցեր են Ալի-
 շանի քերթողական գործունէութեան
 սկզբնաւորութենէն ի վեր ու այդ տարինե-
 րու կեանքը փոխանակ հաստատելու իր
 պատանեկան գուարթի և անայլայլ տեսու-
 թիւնը, նկատմամբ բանաստեղծի գոյու-
 թեան՝ հակասեր է անոր, սխուր փոր-
 ձառութեամբ զգացումներու և կիրքերու.
 Նշմարեր է իր հոգիին խորը փթթումը
 զեղազան ու սիրատենչ ծաղիկներու, և
 սակայն զանոնց չէ կրցած վերինձիւ-
 ղել, մանաւանդ ազգազեր են իր մէջ. ան-
 կից լքում, խռովում և անարեկում. ան-
 կից ներքին միայնութիւն մը, Այդ վշտին
 և լքուածութեան զգացումը երթալով ա-
 նած է ու միշտ աւելի շեշտուած կը նշը-
 մարուի « Բանք պանդխտի » քերթուած-
 ներուն մէջ. իսկ վերջին ոտանաւորին
 մէջ որոշ և խռովայոյզ կը զգացուին այդ
 ներքին միայնութիւնն և ցամաքութիւնն՝
 ուր Ալիշանի սիրտը կը տուայտի անհուն
 ցաւով ու տազնապով. այդ պատճառաւ
 զգուած մարդկային դէմքերէ կ'ապաւինի
 բնութեան՝ Հոննոսի դարափին օտո, վայ-
 րագ և անզգայ բնութենէն գտնելու դար-
 մանը այն վէրքին՝ որ գիտակցութեան
 խորը թափանցած էր. « սա (սիրոս) շատ
 անձուկ կրեց, կը խիթամ որ պայթի շա-
 րաչար » (էջ 217). Բայց բնութիւնը զի-

տակցութեան ցաւերուն դարման չի կրնար
 ընծայել. մարդ պէտք է դառնայ իր հո-
 գիին, իր յուշերուն. Ալիշան ալ բնութե-
 նէն անյոյս՝ կը վերադառնայ նախկին
 տարիներու իր խանդին և ներշնչման,
 իր Ոգիին, ո՛չ թէ սակայն անով բոցա-
 վատելու և այդ կրակով մաքրագործելու
 իր վիշտը, այն Ոգիով ներշնչուելու և
 զգալու ցաւին բանաստեղծութեան հմայ-
 քը, այլ ընդունելու ազատագրութիւնը
 բանաստեղծի գիտակցութենէն՝ որ զինք
 կը տանջէր. յետ այսքան սիրտ յու-
 զող կիրքերէ, « յետ բուրաւոր հեղիկ մըն »
 չիւններէ և որոտաններէ ինչ բան ինձի
 ընդառաջ պիտի ելլէ... Գերեզմանը (էջ
 222). յուսակորոյս աւարքն է հոգիի մը՝
 որ ալ զգալ ու կրել չ'ուզեր: Այդ վեր-
 ջին քերթուածը այդպէս նախերգանքը
 կ'ըլլայ Հոսկի բաւ առ ոգին նուագունան
 մահազանգ եղբերգին, որ հուժկու կոշ
 մըն է իր բանաստեղծի զօրութեան, վեր-
 ջին անզամ մըն ալ սպրիտու և կրելու,
 ժայթքելով ցատումի և մահամերձ խռով-
 քի հեծեծումները. այն բանաստեղծական
 ներշնչումը՝ որուն իբր կեանքի դիմեց
 իր պատանեկութեան՝ հիմայ իր դամբանը
 կը կերտէ. զեղեցիկ դամբան մը բայց
 մեռելութեան դամբան մը:

Հոգիներու պատմութեան մէջ աղետա-
 լի վիճակ մը կայ, տազնապի և վեր-
 դովման վիճակը՝ ծնունդ երկրայութեան
 և վարանուտի, որ կը յայտնուի զգալու և
 մանաւանդ մտածելու հաստատութիւն չու-
 նեցող էութիւններու մէջ, Բազմաթիւ զօ-
 րութիւններ հոգիին կը ներկայացնեն զա-
 նազան շարժառիթներ, ամէնն ալ իրարմէ
 տարբեր գեղով ու օգտակարութեամբ օժ-
 տուած, ամէնն ալ զրեթէ համահաւասար
 դիւթանքի և վարկի փայլով: Հոգին այս
 շարժառիթներու բազմութեան մէջ, հմայ-
 ուած ամենէն, չի կրնար որոշում մը
 տալ. զգացողութիւնը զինք կը մղէ շքեղ
 և հեշտալի առարկայի մը՝ ներքին բնազ-
 զով. ընդհակառակն կամքը կը ներկա-
 յացնէ ուրիշ մը նոյնքան վեհ ու նոյնքան
 գեղաշնորհ. զգայականութիւնը կը թիւա-

դրէ գրաւուիլ երրորդէ մը՝ որ կը պատկերանայ փափուկ գոյններով, սիրուն զգացումներով. բարոյական ունակութիւն մը կը կենդանացնէ առարկայ մը գերբնական պայծառութեամբ զուարթացած. և հոգին՝ որ զգայուն է, այս վայրաժատին անորոշականութեան մէջ կը բեկանի, կը յուզուի և կը լքանի. այլ ևս իր մէջ սոսկ զգացումներ չէ որ կ'ընդնշմարէ այլ տրտմի մը գոյութիւնը՝ ընդդիմադիր և տանջող ոյժերու և սկզբունքներու պայքարումով. Այս վիճակը հոգւոյ ամենէն չարատանջ վիճակն է, վասն զի չկայ կեանքի ջուրերու հոսումը, չկայ խաղաղութիւն, չկայ սիրոյ լիութիւն. ամէն ինչ ալեկոծեալ և յուզեալ է, ամէն ինչ աննպատակ է, Միւսէ այս վիճակէն (իր ըով էսպէս իմացական էր) ազատելու համար դիմեց ընդհանուր աստուածութեան մը գաղափարին՝ իբր կեանքի արգասաւորութեան, որուն շուրջ պիտի դառնար իր բանաստեղծի գոյութիւնը և սիրեց զգալ ևս ցաւի բանաստեղծութեան վայելքը. Ալիշան (իր ըով այդ վիճակը միայն զգայական էր) կը դիմէ մահուան գաղափարին՝ յաւիտենականութեան մէջ, ուր ոչ ցաւ կայ և ոչ ալ սակայն բանաստեղծութեան վայելք. ասիկա հարկաւ աւելի ապահով վիճակն է զգայականութենէ ազատագրումի, բայց ոչնչութեան ալ վիճակ մըն է. Հոսկի բան առ ոգիև ևուսգահանը այդ ազատագրումի վիճակին ճերթուածն է. Քանի մը բուռն, անգիտակից և ընդվզող մոնչիւններէ վերը, բանաստեղծի գոյութենէն հրաժարելու գաղափարին հանդէպ, շուտով կը համակամի այդ ծրագրին. յետոյ յետս հայեացք մը կը նետէ այն ուղիին՝ ուսկից անցած է իր բանաստեղծի գոյութիւնը, թողլով հետքեր՝ արեան կայլակներու՝ իր սրտին խորք սիրտը սակայն այդ արեան հեղիղին տակ փոխանակ վերակենդանանալու՝ նուազած և ծուրած է, վասն զի այդ արիւնը ցաւով հիւանդ էութեան մը արիւնն է. Այլ ևս փափկանկատութեամբ չէ որ կը վարուի Հ. Ալիշան իր սրտին հետ. տառա-

պանքէ տուայտած, կը նկատէ իր անցեալը շատ անփոյթ ակնարկներով. նպատակն է փութով դիմել գերեզման. որքան ճերթուածը կեանքի առատագեղութիւնով, խոռովքի թոհչըով ծայր կ'առնէ, այնքան երթալով շունչը կը մեղմանայ և կը նուաղի անհետանալու մտելական լուսութեան մէջ. Ալիշան չէ ուզած զգացման բանաստեղծութեան մէջ հոգին պարարել՝ այլ մահուան:

Հ. Կ. ՔՈՒՐԱՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

ԱՆԵՔՍԱՆԴՐ ՎՈՒԴԱ

Գոմոյ՝ Ալեքսանդր Վոլդայի ծննդավայրը, սոյն օրերուս թատր եղած է պերճ հանդէսներու, որ կը սարքուին անուանի գիտնականին մահուան զարադարձը տանելու համար. Վոլդա արժանի է բոլոր այն պատիւներուն՝ որ իրեն կ'ընծայուին, վասնզի մեծ բնազէտ մը չէ միայն, այլ զինքը կարելի է կոչել հայր արդի գիտական զարգացման, որ գրեթէ ամբողջովին կը հիմնուի ելեկտրական արդիւնքներու վրայ: Մինչև իր ժամանակ ելեկտրութեան նկատմամբ գիտուններու ունեցած ծանօթութիւնները ամփոփուած էին կաթուն ելեկտրութեան նեղ շրջանակին մէջ. նոյն իսկ իր հնարած ելեկտրաբեր և ելեկտրաչափ գործիները այդ սահմանը չեն գերազանցեր. ելեկտրական բարդի գիտն եղաւ որ ընդարձակեց հորիզոնը՝ յեղաշրջելու համար կեանքի գիտական և գործնական մարզերը, որովհետև բարդին գիտով ելեկտրութիւնն ելլելով իր կայուն վիճակէն ազդու մ'եղաւ անսահման զօրութեան՝ ծնունդ տալով արդի գիտական քաղաքակրթութեան:

Վոլդայի կեանքն և գիտական գործնարդէն հանրածանօթ են. մտային ուշ գար-